# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №3

*/հայտերի գնահատման և հաստատման նիստի/*

*«ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/27»* ծածկագրով գնանշման հարցման գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գ. Մայիսյան

08 հոկտեմբերի 2019թ
ժամը 12:00

*ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնքապետարան գյուղ Մայիսյան, փողոց 1, շենք 29 հասցեում*

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Արփինե Կարապետյան /Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար/

Հանձնաժողովի Անդամներ՝ Հովհաննես Գրիգորյան / Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /

Ինգա Մարտիրոսյան / Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /

Արտաշ Եղիկյան /Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ/

Հանձնաժողովի քարտուղար՝ Սաթենիկ Մաղաքյան */Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից/*

1. *Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին*

1. *Ընդունել ի գիտություն, որ*

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՀՀ կառավարությամբ առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է եզրակացություն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

1.2 Համաձայն վերը նշված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝

- Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի
- հայտը ներկայացվելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

- հայտը ներկայացնելուն նախորդ հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

*«ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/27.»* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0*

*2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և ընտրված մասնակցի որոշման մասին*

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշեց՝ հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի գնահատման արդյունքները:

| Հ/Հ | Մասնակիցը | Հայտի գնահատականը |
|---|---|---|
| | | |
| 1 | Գևորգ Խուրշուդյան Ա/Ձ | բավարար |

Մասնակիցը ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող իրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ կետը՝ *«ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/27»* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **ընտրված մասնակից** հայտարարել՝

1-6 չափաբաժինների մասով՝ «Գևորգ Խուրշուդյան Ա/Ձ–ին

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ-0*

*3. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
### ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| Գնման ընթացակարգի ծածկագիրը | Պատվիրատուի անվանում | Մասնակցի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Անվանումը | Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | Հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունները (ՀՀ դրամ) | Հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը (ՀՀ դրամ) | | | | Հայտը ներկայացվելու տարվան նախորդող տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը (ՀՀ դրամ) | |
| | | | | | 2016թ. | 2017թ. | 2018թ. | Ընդամենը | Ակտիվներ | Պարտավորություն |
| ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/27 | Մարմաշենի Համայնքապետարան | ԳԵՎՈՐԳ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ | 57232675 | 0 | 447,993,720 | 568,504,971 | 765,848,270 | 1,782,346,961 | 649,069,571 | 7,822,952 |

07.10.2019

Տեղեկատվությունը կազմվել է ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչության աշխատակից՝ Հեղինե Նաչարյանի կողմից

### 4. *Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին*

Հանձնաժողովը որոշեց գնանշման հարցման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 12:00-ին, ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնքապետարան, գյուղ Մայիսյան, փողոց 1, շենք 29 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0*

Հանձնաժողովի Նախագահ՝ ______________ Արփինե Կարապետյան
/ստորագրություն/

Հանձնաժողովի անդամ՝ ______________ Հովհաննես Գրիգորյան
/ստորագրություն/

Հանձնաժողովի անդամ՝ ______________ Ինգա Մարտիրոսյան
/ստորագրություն/

Հանձնաժողովի Անդամ՝ ______________ Արտաշ Եղիկյան
/ստորագրություն/

Հանձնաժողովի Քարտուղար՝ ______________ Սաթենիկ Մաղաքյան
/ստորագրություն/